

քեղոնական խմորը եւ վերահաստատեց հայ եկեղեցին իր հինաւուրց հունի մէջ: Աշոտ պատմիչը արդէն հրապարակի վրայ էր, նա որ 732 թուին նշանակուեց իշխան արարներէ կողմից, հռչակաւոր Աշոտ կոյրը, Բագրատունեաց վերածնունդի հայրը: Հայ քաղաքականութիւնը թեքում էր արարների կողմը կամաւ թէ ապամայ: Եկեղեցին շտապեց ձգել իր դիրքը նոր կացութեան հանդէպ: Մանաղկերտի ժողովը երկրի տրամադրութեան անխաբ յայտարարն է եւ այս մտքով արժէքաւոր ոչ միայն եկեղեցական, այլ եւ քաղաքական պատմութեան տեսակէտից:

Վրաց եկեղեցու վիճակը այնքան էլ պարզ չէ: Եօթներորդ դարու վերջերից ընդհատուած է վրաց կաթողիկոսների շարքը երկար ժամանակով: Սակայն, անկասկած է, որ Վրաստանը, ինչպէս եւ բիւզանդական Հայաստանը մընացին փարած պետական դաւանութեան: Արարական աղեղեցութիւնը երբեք չթանձրացաւ Տալքի եւ Կղարջի շրջանում, իսկ Արխագական երկիրները մնացին ազատ: Ինչ եւ լինէր այս կողմերում եկեղեցու վիճակը, կարելի էր նախատեսել, որ պիտի կլանուէր կայսերական եկեղեցու կողմից, մանաւանդ այն օրէն երբ Բիւզանդիան սկսեց ծանրանալ այս շրջանի վրայ եւ ստեղծեց կիւրապաղատական իշխանութիւն:

Մանաղկերտի ժողովում չկար Տալքի ներկայացուցիչը: Նոյն 726թուին մեռաւ նշանաւոր Սմբատ Կիւրապաղատը, որ Սպերի կամ Տալքի իշխաններիցն էր եւ վերջերը հաստատուեց Փոյթ (արդի Փոթի) քաղաքում: Թերեւս, սա լինէր այն երկարնակ Սմբատը, որ հակաճառութիւն ունեցաւ Ստեփանոս Սիւնեաց եպիսկոպոսի հետ (Մովս. կաղ. Գ. 17): Պէտք է կարծել, որ Սմբատի քաղքեղոնականութիւնն անհատական զանցառութիւն չէր, այլ յատուկ էր իր բնագաւառին, ուր երկարաբնակ դաւանութիւնը ծիւեր ունէր տակաւին Ներսէս Շիրողի օրերից:

Թ. դարում Ճորոխի հովիտը արդէն նւաճուած էր քաղքեղոնական եկեղեցու կողմից: Կրօնափոխութեան առաջին հետեւանքն եղաւ ազդափոխութիւն: Դաւանութիւնն էր ազդուութեան յատկանիշը, եւ քաղքեղոնիկ հա-

յը համարուած էր հոռոմ, վրացի, բայց ոչ հայ: Երբ Բագրատունիները յանձին Վասակի մտան եւ հաստատուեցին Տալք եւ Կղարջը, երկրի բնիկ ազգաբնակչան պատկերը փոխուած էր կրօնական գետնի վրայ: Նոր իշխանական տունը համակերպուելով տեղական միջավայրին, նոյն ուղիով ընթացաւ, մանաւանդ որ կենդրոնն էր ընտրել Արտանուշ, վրական շրջանը: Շուտով դարձաւ վրական ազգային հարստութիւն:

Այս հանդամանքով Բագրատունեաց տան միութիւնը ջլատուեց եւ նրանց քաղաքական յղացումները կանգ առան կէս ճանապարհին:

Բագրատունեաց գործունէութեան դաշտն էր Հայաստանը արաբական լայնարձակ մըտքով, այսինքն՝ ամբողջ Կովկասը, որի աշխարհագրական եւ քաղաքական կենդրոնն էր Իրապէս Շիրակը, իշխանական նոր ուստանը: Այստեղից բխած կամ ներշնչուած ջանքերը տանում էին դէպի մի հոյակապ կառուցում — հաւաքել խմբել կովկասեան բոլոր ցեղերը մի եւ հանուր քաղաքական յարկի տակ, ներդաշնակել նրանց կեանքն ու գործունէութիւնը համագործակցութեան եւ համերաշխութեան գետնի վրայ, Բագրատունի ծառի հովանու ներքեւ: Ասել է թէ ստեղծել հարստեանական մեծ պետութիւն:

Արեւելքի բոլոր պետութիւնները միշտ հարստեանական են եղել, ոչ միայն Իրանում, այլ եւ Ասորեստան-Բաբելոնում: Բագրացեղ եւ բագրաւեղու ժողովուրդները պետական օղակով շաղկապելու ուրիշ միջոց չի գտել հին պատմութիւնը: Բագրատունեաց ձգտումները եղակի երեւոյթ չէին: Նրանց ժամանակ նման տենչանքով տողորուած էին եւ Տահիրեանք, Սաֆֆարեանք եւ Սումանեանք, որոնք Թ. ժ. Ա. դարերի ընթացքին գուն գործեցին վերականգնել Իրանի միութիւնը համաձայն նրա պատմական աւանդութիւններին:

Բագրատունիք յաջողեցին իրենց ծրագիրը մինչեւ մի որոշ աստիճան: Բաւական է վերջիւ վրաց Տարեգրքի զրոյցը, որ Թորգոմի ութ որդիները, գլուխ ունենալով Հայոսին, կազմում էին մի ընտանիք, որ նրանք բոլորը